**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8**

**ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/14» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի**

Նիստի անցկացման՝

-վայրը՝Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.

-օրը՝ 29 հունիսի 2020թ.

-ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բաբինյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Սարգսյանը, Ա. Խառատյանը, Զ. Գեղեյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

Բացակայում է՝ Գ. Անտոնյանը

ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձի 23.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/51 որոշումը կատարելու մասին

---

(Կ. Բաբինյան)

1.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձի 23.06.2020 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/51 որոշումը (այսուհետ՝ որոշում) (հրապարակված 25.06.2020թ.) գնահատող հանձնաժողովը որոշեց հետևյալը.

Հաշվի առնելով վերը նշված որոշման 5-րդ կետով սահմանված բողոք քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը, համաձայն որի՝ ««Իմմունոֆարմ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի բավարարում գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին՝ գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագրի Հավելված 1-ի տեխնիկական-բնութագիր-գնման ժամանակացույցի տեխնիկական բնութագրով սահմանվել է Ներքին ծրագիր՝ windows կամ համարժեք, իսկ «Իմմունոֆարմ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտին կից Հավելված 1.1-ով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ

նշված է Ներքին ծրագիր՝ X86 core CPU, ինչը հանդիսանում է, այլ ոչ թե ներքին ծրագիր», գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի դրույթներով, որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել «Իմմունոֆարմ» ՍՊ ընկերությանը առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 30.06.2020թ. ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2020 թվականի հուլիսի 1-ին ժամը 11:00-ին:

Ընդունել որոշում՝ կողմ-4, դեմ-0

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.**

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | | Կ. Բաբինյան |
| Անդամներ՝ | | Տ. Սարգսյան |
| | | Ա. Խառատյան |
| | | Ջ. Գեդեյան |
| Քարտուղար՝ | | Գ. Մուրադյան |